651 Նայի՛ր Գողգոթային (2),

1. Նայի՛ր Գողգոթային (2),
Այնտեղ գամված խաչին՝
Տառապյալ քո Փրկիչը,
Տառապյալ քո Փրկիչը,
Քո մեղքի համար գամված,
Մեղքիդ համար խաչված՝
Չարչարվում է, տե՛ս, քեզ համար,
Նայի՛ր դու Նրան:

2. Նայի՛ր Գողգոթային (2),
Նայիր Նրա հայացքին.
Աղերսով ուղղված դեպի երկինք.
«Ների՛ր նրանց, Հա՛յր, ների՛ր նրանց, Հա՛յր»,-
Խնդրում է մեզ համար, խնդրում է մեզ համար
Հորը երկնավոր:

3. «Կատարվա՛ծ է»,- Նա գոչեց,
«Կատարվա՛ծ է»,- Նա գոչեց,
Եվ գլուխը ցած թեքեց,
Իր կյանքը տալով մեզ համար՝
Մեզ համար հոսեց,
Մեզ համար հոսեց Նրա սուրբ արյունը,
Նրա սուրբ արյունը,
Նրա սուրբ արյունը: